Տպագրված է 3 օրինակից

Օրինակ --

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ՀԱՄ խորհրդի
09/07/ 2012թ թիվ 9-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
«11» հուլիսի 2012թ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ՀԱՄ խորհրդի նախագահ

---------- Ներսես Երիցյան

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-038

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ)

ԵՐԵՎԱՆ - 2012

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնները սահմանում են ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացին ներկայացվող պահանջները, որոնցով պետք է ղեկավարվեն Ընկերությունները Բյուրոյի խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 10-Լ որոշմամբ հաստատված «ԱՊՊԱ վկայագիրը կազմելու և լրացնելու հրահանգ» RL 1-002 կանոնների համաձայն իրենց աշխատակիցների, լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալների միջոցով ԱՊՊԱ վկայագիրը լրացնելիս:

2. Սույն կանոնների նպատակն է ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթացին ներկայացվող պահանջների միջոցով՝

1) ԱՊՊԱ պայմանագրերի լրացման և կնքման գործընթացի արդյունավետության բարձրացումը,

2) Տեղեկատվական համակարգ մուտքագրվող տվյալների ճշգրտության և ամբողջականության ապահովումը՝ հնարավորինս բացառելով այս ոլորտում կեղծիքների իրականացումը:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) **Բյուրո՝** «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

2) **Ընկերություն՝** Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերություն,

3) **ՃՈ՝** Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն,

4) **Տեղեկատվական համակարգ՝** ըստ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

5) **Կարգ՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 326-Ն որոշմամբ հաստատված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետը և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգ»,

6) **ՏՄ՝** ավտոտրանսպորտային միջոց, որի օգտագործումից բխող պատասխանատվությունը ենթակա է պարտադիր ապահովագրության:

ԳԼՈՒԽ 3

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Ընկերությունները ԱՊՊԱ պայմանագիր կնքելուց առաջ՝ նախքան ԱՊՊԱ վկայագրի համապատասխան դաշտերը լրացնելը, Կարգով սահմանված կարգով հարցում են կատարում Տեղեկատվական համակարգ՝ համապատասխան ՏՄ-ի և դրա սեփականատիրոջ վերաբերյալ Կարգի Հավելված 2-ի Չև 8-ով սահմանված տեղեկատվությունը ստանալու համար: Ընդ որում, սույն կետով սահմանված հարցման կատարման և ԱՊՊԱ պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ օրացուցային օրը: Սույն կետով սահմանված պահանջը չի տարածվում այն ԱՊՊԱ պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվում են Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով նախատեսված «ժամանակավոր ներմուծում» կամ «տարանցիկ փոխադրում» մաքսային ռեժիմներով, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների առևտրով զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից վաճառքի համար Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով ներմուծվող ՏՄ-ների վերաբերյալ:

5. Ընկերությունը սույն կանոնների 4-րդ կետի համաձայն կատարված հարցման արդյունքում ստացված տվյալները համեմատում է ՏՄ-ի հաշվառման վկայագրի, ինչպես նաև սեփականատիրոջ անձը հաստատող փաստաթղթում արտացոլված տվյալների հետ:

6. Սույն կանոնների 5-րդ կետով նախատեսված համեմատության արդյունքում տվյալների անհամապատասխանություն չհայտնաբերվելու դեպքում ԱՊՊԱ վկայագրի համապատասխան դաշտերը լրացվում են Տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա: Սույն կանոնների 5-րդ կետով նախատեսված համեմատության արդյունքում տվյալների անհամապատասխանություն հայտնաբերվելու, ինչպես նաև սույն կանոններով սահմանված կարգով կատարված հարցման արդյունքում որևէ տվյալ չստացվելու դեպքում ԱՊՊԱ վկայագրում համապատասխան դաշտերը լրացվում են ապահովադրի կամ նրա լիազորած անձի ներկայացրած փաստաթղթերում արտացոլված տվյալների հիման վրա:

ԳԼՈՒԽ 4

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7. Ընկերության անունից ԱՊՊԱ պայմանագրերի կնքման համար Ընկերության՝ սույն կանոնների 3-րդ գլխով սահմանված գործընթացում ներգրավված աշխատակիցը, լիազորված անձը և (կամ) ապահովագրական գործակալը ԱՊՊԱ վկայագրերի լրացման ժամանակ պետք է ապահովված լինի առնվազն՝

1) համակարգչով,
2) տպող սարքով,
3) Ընկերության տեղային ցանցին միանալու հնարավորությամբ (ինտերնետով, լարային միացմամբ կամ որևէ այլ եղանակով),

4) ԱՊՊԱ վկայագրերի լրացման համար անհրաժեշտ Ընկերության ներքին ծրագրային ապահովմամբ:

ԳԼՈՒԽ 5

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Սույն կանոնների 4-րդ կետով նախատեսված հարցման գործընթացին ապահովագրական գործակալների ներգրավված լինելու դեպքում համապատասխան Ընկերությունն ապահովում է իր և տվյալ գործակալների միջև կապի պաշտպանվածությունը: Սույն կետով նախատեսված դեպքերում օգտագործվում է «HTTPS» արձանագրությունը:

9. Սույն կանոնների 3-րդ գլխով սահմանված գործընթացում ներգրավված անձինք համապատասխան հարցումն իրականացնում են իրենց տրված հատուկ ծածկանվան և գաղտնաբառի մուտքագրման միջոցով:

10. Սույն կանոնների 9-րդ կետով նախատեսված գաղտնաբառերի նվազագույն երկարությունը պետք է լինի ութ նիշ, ընդ որում, դրանք պետք է պարտադիր ներառեն թվեր, փոքրատառեր, մեծատառեր:

11. Սույն կանոնների 3-րդ գլխով սահմանված գործընթացում ներգրավված անձանց տրամադրված գաղտնաբառերը պետք է առնվազն վեցամսյա պարբերականությամբ փոփոխվեն:

12. Ընկերությունները առնվազն յոթ տարի ժամկետով (եթե իրավական այլ ակտերով պահպանման առավել երկար ժամկետ սահմանված չէ) էլեկտրոնային եղանակով պահպանում են իրենց կողմից կատարված բոլոր հարցումները, ներառյալ՝ հարցումը կատարած աշխատակցի, լիազորված անձի և (կամ) ապահովագրական գործակալի վերաբերյալ տվյալները: Ընկերությունները սույն կետով սահմանված կարգով պահպանում են նաև իրենց կողմից կատարված բոլոր անհաջող մուտքերի վերաբերյալ տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ 6

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն կանոններն ուժի մեջ են մտնում 2012 թվականի հուլիսի 15-ին, բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի:

14. Սույն կանոնների 12-րդ կետն ուժի մեջ է մտնում 2012 թվականի օգոստոսի 1-ին:

15. Սույն կանոնների գործողությունը չի տարածվում մինչև 2012 թվականի օգոստոսի 1-ը ձեռագիր եղանակով լրացվող ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթացի վրա:

16. Ընկերությունները պարտավոր են 2012 թվականի հուլիսի 15-ից մինչև 2012թ. օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրենց անունից կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի առնվազն 50 տոկոսը կնքել սույն կանոններով սահմանված կարգով: